

ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՄ ԿՐՆԱՅ ՓՐԿԵԼ

«Մա՛յր ազատե՛ գիս մահէն: Մա՛յր չեմ ուզեք մեռնիլ»: Այսպէս ազգակեց երիտասարդ մը իր մօրը, ինքնաշարժի ծանր արկածի մը հանդիպելէ ետք: Մայրը դառնօրէն լացաւ: Լացաւ յատկապէս, որովհետեւ ոչինչ կրնար ընել, իր զաւակը ազատելու համար մահէն: Աշխարհի մէջ մեզի ամէնէն մօտիկ եւ մեզ ամէնէն շատ սիրող անհատներն անգամ չեն կրնար մեզ ազատել երբ մահը գայ մեր դռները թակելու: Եթէ ասիկա իրական է մարմնաւոր մահուան պարագային, նո՛յնքան եւ աւելի իրական է հոգեւոր մահուան պարագային: Յիսուսէն գատ ուրիշ մէկը չի կրնար մեզ փրկել (Գրծ. 4.12): Մեզ չեն կրնար փրկել ո՛չ քրոջիցները եւ ո՛չ ալ նգնաւորները, ո՛չ սուրբերը եւ ո՛չ ալ հրեշտակները, այլ՝ միայն Յիսուս, որուն փա՛ռք յաւիտեանս ամէն:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԹԵՐՅՈՒՄԸ

Մենք պետք է միշտ Աւետարանի խրատով դաստիարակուինք՝ լուսաւորուելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կտակարաններու մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Յոգիի շնորհքներէն: Ուստի դարձրինք վայրապար քննութենէ եւ ընթանանք Սուրբ Գիրքի՝ Հին եւ Նոր Կտակարաններուն խրատներով: Սուրբ Գիրքերը մեր Վարդապետներն են: Անոնց միջոցաւ ընդունինք յաւիտեանական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդաձուլութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Ս. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, Նարեկ Սրբազան պիտի հանդիպի 18-40 տարեկան հայ երիտասարդ-երիտասարդուհիներու հետ՝ ծանօթացման ընկերային հաւաքով ու Աստուածաշունչի սերտողութեամբ քննարկելու համար հայ քրիստոնէական կեանքը: Միաժամանակ, նոյն ժամուն եւ նոյն վայրին մէջ, Արժ. Ս. Ղեւոնդ քինյ. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Միքելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՕՍԶԻ ԽՍ ՈՅԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 ԹԻՒ 40

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՍ. 17.7-14: Բ. Կր. 13.5-13: ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍ 11.27-33

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան: Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն՝ թէ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ»: Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ՛ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիր իրեն. իսկ՝ մարդոցմէ էր չենք կրնար ըսել: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր, թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

Ո՛վ ՏԷՐ, մեր ՏԷՐԸ, ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ: Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը, բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստող հիւսեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լուսութեան մատնես թշնամիներդ եւ հակառակորդներդ: Երբ կը դիտեմ երկինքը, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ. Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգաձութիւն ցոյց կուտաս անոր: Չայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր. քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները, երկնքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛վ ՏԷՐ, մեր Տէրը, ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ (Մաղմուս 8):

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
17.7-14

Երբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յառնէ:

Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառնեն իրենց գարշելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը ֆաղափներդ պիտի լժուիս եւ աւերուիս, այնպէս՝ ինչպէս պարպուեցան Ամորիացիներուն եւ Խեւացիներու ֆաղափները Իսրայելացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լժեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ նոյնիսկ եթէ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ հունձփին արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրամուրթիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն:

Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան, սակայն Աստուած պիտի նզովէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը փշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'ալէ կառքերուն հանած փոշին:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐԻՆՏԻՆԵՐՈՒՆ

13.5-13

Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ: Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք, թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ, որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով չենք ուզեր մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը կ'ուզենք, որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ նշանակութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ՝ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք, որ հետզհետէ կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ, որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ողջ եղէ՛ք: Կատարեալ ըլլալու աշխատեցէ՛ք. միտքարուեցէ՛ք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէ՛ք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէ՛ք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՅ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՐՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Տասներկու աշակերտներու կողքին, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը քարոզելու, դէեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւս Քրիստոսի կողմէ առաքելութեան կը դրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքելներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ երբայեցի ժողովուրդը անապատային թափառումներու ընթացքին կը հասնին Եդիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմատենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք 15.27):

ԱՂՕԹԸ

Տէ՛ր իմ եւ Աստուած իմ Դո՛ւն եւ իմ օգնականս, Քու ձեռքիդ մէջ եմ եւ: Դո՛ւն գիտես իմ օգուտս, օգնէ՛ ինձի, մի՛ թողուր, որ մեղանչեմ Քեզի հանդէպ, քանի որ մոլորած եմ չար դեւերու կողմէ: Մի՛ թողուր, որ հետեւիմ սեփական կամքիս ու կորսուիմ մեղքերուս մէջ, այլ՝ զթա՛ ինձի Քու ձեռքի ստեղծածիդ: Մի՛ վտարեր զիս, Տէ՛ր, քու աչքէդ եւ Սուրբ Հոգիդ մի՛ հաներ ինձմէ: Ե.Ա.

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Երբեք մի՛ ունենաք խարդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են, այլ՝ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիչներով, ծաղկելով առաքինասէր վարքով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանզի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեւանը կ'ըլլանք երկրի վրայ: Որովհետեւ բոլոր սխրանքներու եւ առաքինութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ Հոգիի եւ մարմնի սրբութիւնն է:

Ամենայն արդարութեան եւ արիութեան թագը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է, եւ երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծարանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

ՍԻՐԵԼ ԲԱՐԵԿԱՍՐԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԳԱՌՆԱԼ ԱՆՈՐ

Երբ հնարատրութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար:

Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի:

(Առակաց 3:27-28)